ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«----------2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշի մարզ

Գանձաքարի միջնակարգ դպրոց 6Բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Բաղմանյան Մելինե

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023 2024

« ---------- ---------- » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** *Դասարանը բաղկացած է* տասնյոթ սովորողից: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն գերազանց ընդունակություններ: Կան մեծ թվով գերազանց սովորողորողներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, միջանձնային հարաբերությունները հիմնված հոգատարության և փոխադարձ հարգանքի վրա: Դասրանում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող մեկ սովորող: Դասարանի որոշ աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է անբավարար: Չնայած այս հանգամանքին՝ երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն ուսումնառություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող սովորողներ:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսմանառաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողունակություններ :Հետևել կարգապահությանը, մաքրությանը, անձնական հիգիենային,ձևավորել համագործակցության, փոխօգնության մշակույթ) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն ապահովել ֆիլմերի միջոցով, ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն: Հայրենասիրական կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Ներկայացնել մի շարք ֆիդայիների,պետական և ռազմական գործիչների և թվարկել այն բնավորության գծերը,որոնք հատուկ են հայրենասեր և ազգանվեր անձանց,բերել օրինակներ, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն:Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ միայն աշխատանքի ու

աշխատասիրության միջոցով կարող են իրականություն դարձնել երազանքներն ու նպատակները::

3.6 Բնապահպանական դաստիարակություն: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկ,փորձել վեր հանել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. Դպրոց-ընտանիք կապը: Ծնողների հետ հաճախ կազմակերպել հանդիպումներ,քննարկումներ:Կազմակերպել ծնողավարման դասընթացներ: Ծնողներին առավելագույնս մասնակից դարձնել երեխաների ուսումնական և արտաուսումնական միջոցառումների կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Կազմակերպչական հարցեր 1. Ընտրել դասարանի ավագ 2. Կազմել հերթապահություն :	1 Սեպտեմբեր 9	աշակերտ դասղեկ
II	Ես և իմ ընկերները: Ընկերասիրություն: Պատասխանատվություն:	11 Սեպտեմբեր 16	աշակերտ դասղեկ
III	Զրույց <<Ինչ պայմաններում ծնվեց մեր անկախությունը և ինչ ճանապարհ է անցել>>	18 Սեպտեմբեր 23	աշակերտ դասղեկ
IV	Պատմական ակնարկներ Հայաստանի անցած ուղու մասին:	25 Սեպտեմբեր 30	աշակերտ դասղեկ
V	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը: հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	2 Հոկտեմբեր 7	աշակերտ դասղեկ
VI	Մեծերի և փոքրերի փոխհարաբերությունները հասարակությունում և ընտանիքում:	9 Հոկտեմբեր 14	աշակերտ դասղեկ
VII	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>>: Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	16 Հոկտեմբեր 21	աշակերտ դասղեկ
VIII	Ընտանիքն աշակերտի հոգու հայելին է: Պատմել ընտանիքի մասին:	2 Նոյեմբեր 7	աշակերտ դասղեկ
IX	Մարդիկ, ովքեր ազնիվ են և շիտակ, հակված են ավելի լավ հարաբերություններ ունենալ: Ազնիվ մարդը երբեք չի ստում. Լինենք ազնիվ:	9 Նոյեմբեր 14	աշակերտ դասղեկ
X	<<Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա	16	աշակերտ

	միջավայրը>>ասոցացնել հին և նոր դասը , տալ խնդրին նոր լուծումներ:	Նոյեմբեր 21	դասղեկ
XI	<<Գնահատիր ինքդ քեզ>>:Նպատակն է ձևավորել արժեհամակարգ ,ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	23 Նոյեմբեր 28	աշակերտ դասղեկ
XII	Իմ սիրած հեքիաթը, որ հերոսին կուզեիք նմանվել: Զրույց-քննարկում, ինչենք սովորում հեքիաթներից:	30 Նոյեմբեր Դեկտեմբեր 4	աշակերտ դասղեկ
XIII	<<Բնական աղետներ>>:Ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները,դիմակայելու ձևերը:	6 Դեկտեմբեր 11	աշակերտ դասղեկ
XIV	<<Կարող եմ օգտակար լինել>>թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	13 Դեկտեմբեր 18	աշակերտ դասղեկ
XV	Մարդու պարբերական հակումների և կարիքների ամբողջությունը, որոնք վնասում են նրա առողջությանը, կոչվում են վնասակար սովորույթներ:	20 Դեկտեմբեր 25	աշակերտ դասղեկ
XVI	<<Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին>>:Նպատակն է աշակերտներին տեղեկացնել , թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	8 Հունվար 13	աշակերտ դասղեկ
XVII	<< Ազգային և միջազգային տոներ>>: Նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	15 Հունվար 20	աշակերտ դասղեկ
XVIII	<< Եկեղեցին , ազգը,բանակը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու ,բանակի դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	22 Հունվար 27	աշակերտ դասղեկ
XIX	Ինչ կանեի, եթե կախարդական փայտիկ ունենայի:	29 Հունվար Փետրվար 3	աշակերտ դասղեկ
XX	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	5 Փետրվար 10	աշակերտ դասղեկ
XXI	<< Ինչպես վարվել աղբի հետ >> :Օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	12 Փետրվար 17	աշակերտ դասղեկ
XXII	Սիրված մասնագիտություն, ում եմ ուզում նմանվել, ինչ եմ ուզում դառնալ: Խոսել մասնագիտական կողմնորոշման մասին:	19 Փետրվար 24	աշակերտ դասղեկ
XXIII	Մայրենի լեզուն ազգի պահպանման հիմքն է, սիրենք ու անաղարտ պահենք մայրենին:	26 Փետրվար	աշակերտ դասղեկ

		Մարտ 2	
XXIV	Մոտենում է մարտի 8-ը ինչ անակնկալ եմ պատրաստել մայրիկի և քույրիկների համար:	4 Մարտ 9	աշակերտ դասղեկ
XXV	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները:	11 Մարտ 16	աշակերտ դասղեկ
XXVI	Անհոգ լինելը ժպիտի մի մասն է: Հաճախ եք ժպտում:	18 Մարտ 23	աշակերտ դասղեկ
XXVII	Հաջողության հասնելու գրավականը: Ինչ է անհրաժեշտ հաջողության հասնելու համար:	1 Ապրիլ 6	աշակերտ դասղեկ
XXVIII	<< Պատասխանատու քաղաքացի >> : Աշակերտները այս թեման ուսումնասիրելուց հետո կիմանան , թե ինչպիսին պետք է լինի ցանկացած քաղաքացի:	8 Ապրիլ 13	աշակերտ դասղեկ
XXIX	<< Պետք է արդյոք խնայել >>: Խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը , ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք:	15 Ապրիլ 20	աշակերտ դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> : Աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը: Նրանց մոտ ձևավորել հայրենասիրություն,մարդասիրություն և պատմությունից դասեր քաղելու գաղափար:	22 Ապրիլ 27	աշակերտ դասղեկ
XXXI	<< Ասացվածքի ամբիոն >>: Աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին, և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ:	29 Ապրիլ Մայիս 4	աշակերտ դասղեկ
XXXII	Սպորտը առողջության հիմքն է: Որ սպորտաձևն եք սիրում, ինչ մարզաձևով եք զբաղվում:	6 Մայիս 11	աշակերտ դասղեկ
XXXIII	<<Աշխատակից ենք ընտրում >> : Սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ , այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարևոր են բոլոր մասնագիտությունների տեր անձանց համար:	13 Մայիս 18	աշակերտ դասղեկ
XXXIV	<< Ձեռքբերումներս>> խորագրով քննարկման կազմակերպում:	20 Մայիս 25	աշակերտ դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
1-ին շաբաթ	Կազմակերպչական աշխատանք: Ջերմ միջավայրի ստեղծում	
2-րդ շաբաթ	Էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր – մշակութային կենտրոն	
3-րդ շաբաթ	Դասախոսություն Հայաստանի երրորդ հանրապետության մասին վերաբերյալ	
4-րդ շաբաթ	Քննարկում. Ինչ է ազնվությունը	
5-րդ շաբաթ	Մեր կյանքում կարևոր մարդիկ.ուսուցիչ	
6-րդ շաբաթ	Զրույց.<<Մասնագիտություն,որով հրապուրված եմ>>	
7-րդ շաբաթ	Զրույց բնության հետ ,բնության գրկում	
8-րդ շաբաթ	Քննարկում.<<Իրավունք և պարտականություն>>	
9-րդ շաբաթ	Քննարկում.<<Աշխարհն իմ պատուհանից>>	
10-րդ շաբաթ	Համայնքային հիմնախնդրի բացահայտում	
11-րդ շաբաթ	Ինչ է ընկերությունը: Ինչպես լինել լավ ընկեր:	
12-րդ շաբաթ	Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ	
13-րդ շաբաթ	Զրույց .<<Ինչպես դիմակայել աղետներին,ստեղծել առավել անվտանգ միջավայր	
14-րդ շաբաթ	Քննարկում.<<Կյանքի իմաստի որոնումներում>>	
15-րդ շաբաթ	Կազմակերպել և իրականացնել տարեմուտյան միջոցառում (ցերեկույթ	
16-րդ շաբաթ	<<Կերպարներ,որոնք ոգեշնչում են>>.քննարկում	
17-րդ շաբաթ	Ազգային և միջազգային տոներ.տոնը ազգային առանձնահատկությունների բացահայտման միջոց	
18-րդ շաբաթ	Դասախոսություն և ֆիլմի դիտում << Հայոց բանակ >> թեմայով	
19-րդ	Ժպիտը մարդու կյանքում	

Շաբաթ		
20-րդ Շաբաթ	Զրույց. <<Բարեկամներ և թշնամիներ,հանդուրժողականություն և տկարություն>>	
21-րդ Շաբաթ	<<Երկրորդ կյանք աղբին>>.քննարկում	
22-րդ Շաբաթ	<<Մաքուր միջավայր>>.քննարկում	
23-րդ Շաբաթ	Ինչ են սովորեցնում հեքիաթները	
24-րդ Շաբաթ	Զրույց .<<Ես քեզ նման եմ >>	
25-րդ Շաբաթ	Կանանց իրավունքները. <<Հայ կանայք ,որոնք փոխել են աշխարհը>>:	
26-րդ Շաբաթ	Ինչպես հասնել հաջողության	
27-րդ Շաբաթ	Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ	
28-րդ Շաբաթ	Վատ սովորույթները, դրանց հետևանքները	
29-րդ Շաբաթ	<<Խնայել…ինչու>> բանավեճ	
30-րդ Շաբաթ	Իմ ապագա մասնագիտությունը	
31-րդ Շաբաթ	Հաղթանակ և պարտություն թեմայով դասախուսություն	
32-րդ Շաբաթ	Այցելություն <<Անհայտ զինվոր հուշարձան>>	
33-րդ Շաբաթ	<<Ինչ ցանես,այն էլ կհնձես>>.անդրադարձ տարվա ընթաքում կատարած աշխատանքներին,ձեռքբերումներին:	
34-րդ Շաբաթ	Ճանաչողական էքսկուրսիա	